

Ուրեմն Պոթուշանի եւ Եաշի հայ եկեղեցեաց հնութիւնն եւ Սուչավայի Հայոց աւանդութիւնն կը ցուցնեն, որ Հայք, կարելի է անհատօրէն, շատ կանուխ ժամանակաւ Մոլտաւիա գաղթած են, ուր հետզհետէ երկրին բոլոր առուտուն, եւ նոյն իսկ դրացի երկիրներու եւ Արեւելից առուտուն իրենց ձեռքն անցուցին:

Սակայն այնպէս կ'երեւայ՝ որ Մոլտաւիոյ Ստեփան Ե Փոքր (1517—1527) իշխանին 7034 (1526) Սեպտ. 20ին տուած ռումաներէն վաւերագիրն Հայոց այնչափ կանուխ ժամանակաւ գաղթած ըլլալուն հակառակ ելլէ, վասն զի նոյն վաւերագրոյն մէջ կը կարգանք. « Հայք իմ պետութեանս նախահաւէն՝ Աղեքսանդր Բարի Վոյվոտէն (1402—1433) ընդունուեցան, երբ անոնք «*ուսլին անգո՞ մեր մոլտաւական երկիրները գաղթեցին Հոնգարիայէն եւ ուրիշ երկրներէն իրենց հարց հաւատքին համար հալածուելով*»³¹:

Այս յիշատակութիւնն չի կրնար ուղիղ ըլլալ, վասն զի պատմութեան ուրիշ ամէն աղբիւրներն կը հաստատեն, թէ այն ժամանակ գաղթող Հայերն իրենց թագաւորութեան անկմանէն ետեւ եւ Հայաստան տիրող կրօնական խռովութեանց պատճառաւ «ուղղակի» անկէ եկան, եւ ոչ թէ հունգարական երկիրներէ Մոլտաւիա անցան³²: Վերոյիշեալ վաւերագրոյն վերջին խօսքն՝ թէ «երբ անոնք (Հայք) «*ուսլին անգո՞ մեր մոլտաւական երկիրները գաղթեցին ...*» կրնայ միայն այնպէս մեկնուիլ, որ այնու կը յի-